№ 40 ՄԱՐՏԻ 15 (27) 1878 ՄԱՐՏԻ 15 (27) № 40

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшака"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ռուսաց և գերմանական համալսարաններ։—Ներքին տեսութիւն։ Նամակ Քութայիսից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Անգլիա։ Իտալիա։ Արտաքին լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Բանասիրական։ Երկու ուսանող։

ՌՈՒՍԱՑ ԵՒ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ

—

Վերջին ժամանակները խօսում են թէ Ս. Պետերբուրգի կառավարչական շրջաններում դիտաւորութիւն կայ առաջարկել վերանորոգութիւններ մտցնել ռուսաց համալսարանական սիստեմայի մէջ և մշակել մի նոր պրօէկտ որ կերպարանափոխէր մեր բարձրագոյն դպրոցները գերմանական համալսարանների օրինակով։

Այժմեան ռուսաց համալսարանները ունեն բոլորովին այլ նպատակ, քան թէ գերմանական համալսարանները։ Ռուսաստանում հիմնվեցին համալսարանները այն ժամանակ, երբ ռուսաց հասարակութիւնը դեռ շատ տգէտ էր և հարկաւոր էր ամբոխի մէջ տարածել ընդհանուր կրթութիւնը։ Այդ նպատակին մեր համալսարանները կարողացան կատարելապէս հասնել՝ նոքա բարձրացրին ամբոխի, կամ գոնէ հասարակութեան միջին դասի կրթութեան մակերևոյթը, սերմանելով ժողովրդի մէջ ընդհանուր կրթութիւնը։ Բայց նոքա չունէին գլխաւորապէս աչքի առջև այն նպատակը, որին իրանց կազմակերպութեան շնորհով հասան գերմանական համալսարանները, նոքա չը ստեղծեցին սեփական, ազգային գիտութիւն, չը ծնեցրին մասնագիտութիւն։

Գերմանական համալսարանները գլխաւորապէս մասնագէտներ են պատրաստում, ուրեմն և առաջ են մղում թէ իրանց ազգային, թէ ընդհանուր մարդկային համալսարանական գիտութիւնը,—իսկ ռուսաց համալսարաններ բազմացնում են ընդհանուր կրթութիւն ստացած մարդիկ և ոչ թէ մասնագէտներ։ Դորանով բացատրվում է որ մեզանում միշտ պակասութիւն կայ պրոֆէսորների, գիտութեան մարդիկների, և համալսարանների ամպիոններից շատերը միշտ ազատ են մնում պրոֆէսորներից։

Մարդկային ուղեղը, քիչ բացառութեամբ, ստեղծված չէ այնպէս, որ մարդը բազմագէտ դառնայ։ Երեսուն կամ երեսուն և հինգ առարկաներից հարցաքննութիւն տալով, անկարելի է բոլոր այդ առարկաները մասնագիտական կերպով իմանալ, մանաւանդ որ քանի գնում է մարդկային գիտութիւնը հետզհետէ ճիւղաւորվում է բազմաթիւ ճիւղերի վրա։

Համալսարանի մի ֆակուլտէտի այժմեան գիտութիւնը անհնարին է մասնագիտական կերպով ըմբռնել մարդկային հասարակ ուղեղի համար։ Վեր առնենք բնական գիտութիւնները։ Այժմեան գիտութիւնների ընդարձակումն աչքի առջև ունելով, անհնարին է մի և նոյն ժամանակ զօոլօգիայի, բօտանիկայի, անատոմիայի և մինեռալօգիայի մէջ մասնագէտ լինել։ Այդ բաւական չէ՝ մասնագէտ մինեռալօգ կարող է գեօլօգ չը լինել։

Եւ այդպէս բոլոր գիտութիւնների մէջ։

Երկուսից մինը՝ կամ համալսարանը պէտք է նպատակ ունենայ պատրաստել ընդհանուր կրթութիւն ստացած անձինք, կամ մասնագէտներ։

Ռուսաց համալսարանները իրանց ամբողջ գոյութեան ժամանակ հետևում էին առաջին նպատակին, և ճշմարիտ կատարեցին իրանց դերը, բազմացնելով ամբոխի մէջ կրթված մարդիկների թիւը։ Բայց եթէ ճշմարիտ է այն լուրը որ կառավարչական շրջաններում այժմ դիտաւորութիւն կայ ծառայեցնել համալսարանը գիտնականներ պատրաստելուն, դիտաւորութիւն կայ բուն համալսարանական գիտութիւնը առաջ մղելու,—հասկանալի է որ մեր համալսարանական այժմեան սիստեմը պէտք է վերանորոգվի ուրիշ հիմքերի վրա։

Հասկանալի է որ այն ժամանակ ամենայարմար սիստեմը պէտք է համարվի գերմանական համալսարանների սիստեմը, որի նմանը,—ինչպէս խոստովանում են Եւրոպայի բոլոր ազգերը,—չունի ոչ Ֆրանսիա, ոչ Իտալիա, ոչ էլ մինչև անգամ Անգլիա։

Գուցէ ժամանակով մենք մանրամասնաբար կը ծանօթացնենք մեր ընթերցողներին մի բանասիրական յօդուածում Գերմանիայի համալսարանական սիստեմայի հետ։

Գ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ՈՒՍԱՆՈՂ

III

Կամբամբուլին էս էն օղին է,
Որ մեզի քաջ ծանօթ է,
Որոյ համը չը տեսնելը
Ուսանողին մեծ ամօթ է։

Ձիւնը մի արշինաչափ կանգնած էր փողոցներում, Սահնակները սղղում, անցնում էին Արամի մօտից։ Կոստանդը իր երկու ընկերօջ հետ, նոյնպէս հարուստ մարդի որդիք, ինչպէս ինքը, մնում էր մի երայարկ տան վերին յարկում։ 20—30 աստիճանաւոր սանդուղքները տանում էին նրա պատշգամբը։ Այդ տեղից ամառ ժամանակ պատկերանում էր մի հիանալի տեսարան. քաղաքի համարեա մեծ մասը երևում էր մարդու աչքին։ Զորս կողմը ծառեր, տունկեր, լայն ու ընդարձակ պարտէզներ, լի բազմատեսակ մրգեղէններով։ Բ. քաղաքի ոչ այնքան հարուստ բնակիչները բնութեան այդ բարիքով կարելի է ասել, հարբած էին։ Բայց այժմ ձմեռ էր, տերևաթափ ծառերի միջից որոշ ու պարզ կերպով տեսնվում էին տների ու տնակների կղմինտրեայ ու տախտակի կտուրները, որոնց վրայի խողովակներից բարձրանում էր ամպի նման ծուխը և ցրվում սառ օդի մէջ։ Արամը բարձրանալով այդ պատշգամբը, լսեց մի աղմուկ, որ գալիս էր Կոստանդի սենեակներից։ Նա մի րոպէ կանգնեց պատշգամբի վրա և նայեց դէպի քաղաք։ Շատ անյարմար ժամանակ պատահեցի ես, մտածեց նա, բայց հետաքրքրութենից չարժված մտաւ նախասենեակը, մաքրեց ոտքերը և բաց արեց սենեակի դուռը։ Նրա առաջ 10-ի չափ ջահել տղերանց ուրախ դէմքեր երևացին։—Новый гость, господа,—գոռացին մի քանի տեղից,—чару вина ему, чару вина և Կոստանդը խառնված մազերով ու կարմրած դէմքով մոտեցրեց նրան մի լիքը բաժակ.—օ, բարև Արամ, խմիր կարմիր գինին, Կախէթու գինի է, միանգամից խմիր։ «Պարոններ թողէք փոքր հանգստանամ։ Ես սառել եմ, Կոստանդ, թող դեռ մի փոքր տաքանամ, ի սէր Աստծու»։ Բայց նա մինչև առաջարկած բաժակը չը դատարկեց, չը կարողացաւ իր գլխարկը ցած դնել։ Սենեակը, ուր մտաւ նա, մի խառն ու չփոթ դրութիւն էր ստացել։ Թէև երևում էր, որ ճաշը վերջացել էր, բայց սփռոցով ծածկած սեղանը զրված էր սենեակի մէջ, որի մի անկիւնում դրած թիթեղնեայ վառարանի կրակի վրա խորովում էին մի քանի չամփուր թռչունի միս։ Ջահել հիւրերից երկուսը համարձակապէս պարկած գիմացը եղած մահճակալի վրա, երևում էր, որ սիրով խօսում էին. երկուսը անց ու դարձ էին անում մի սենեակից միւսը, ձեռքերը իրար պարանոցով գցած։ Իսկ Կոստանդը գինով լիքը ահագին շիշ ձեռքին բռնած լցնում էր և տալիս էր միւս ջահել տղերանց։—Խմիր, ասաց նա մօտեցնելով լցրած բաժակը 18 տարեկան մի հայ սիրունատես երիտասարդի, որ Մոսկվայից եկած, առաջին ծանօթութիւնը եղել էր Կոստանդի հետ։ Սիրունատես երիտասարդի աչքերը շաղվել էին արդէն, բայց նա չուզենալով իր բարեկամի կամքը կոտրել իր մերժումով, առաւ և խմեց։—За здаровье насъ любящихъ,—ասաց Կոստանդը, լցնելով բոլորի բաժակը—господа чекнемся և բաժակը ամենքի բաժակին չղկացնելուց յետոյ սկսեց սովորական երգը՝ «Друзья, подагрой изнуренный, ужъ не въ силахъ больше пить... Շիշը արդէն դատարկվել էր, երբ Կոստանդը ձայն տուեց՝ Մարտին. տան տիրոջ ծառան մօտեցաւ։—Ի՞նչ է պատահել քեզ, Կոստանդ, ասաց մի ռուս ուսանող, բաւական է..էլ աւելի չեմ կարող խմել։ Կարծեմ, ժամանակ է մեր տները գնալու, ասաց Կոստանդը խրոխտաբար, հանելով իր ժիլետի գրպանից մի կապոյտ հնգանոց։— Бѣги, Мартинъ, и принеси намъ краснаго, хорошаго...Մարտինը հրեղէնի նման հեռացաւ և բերեց իր հետ ահագին շիշը լի գինով։ Արդէն կէս էր եղել գինին և ջահել հիւրերը այս անգամ հրաժարվում էին խմելուց։ Մի քանիսը նրանցից Կոստանդից ծածուկ, բաժակն առնում, չփում էին ծաղկենկար պատերին։ Երեկոն մօտ էր, երբ ջահել հիւրերը—ուսանողները, այժից ընկած հարբած դուրս եկան Կոստանդի մօտից։

Արամի յանդիմանական հայեացքը, հիւրերի ցրվելուց յետոյ, ստիպեցին Կոստանդին հարցնել նրան՝—Ну къ чему такой презрительный взглядъ, а! скажи! Արամը վերջապէս ասաց նրան.

—Այս ինչ քեֆերի հետ ես, Կոստանդ, այդպէս արեցիր, որ գիմնազիայից դուրս արին է։...

—Էհ շատ հարկաւոր է։

—Կոստանդ, ինչեր ես ասում, ամսական 60-80 ռուբլի փողը ուսանող թէ վատնելու համար է ուղարկում հայրդ.

—Էդ քո գործը չէ, ես գիտեմ ինչ եմ անում։

—Ճշմարիտ ես ասում, Կոստանդ, սրա մասին խօսելը իմ գործս չէ ի հարկէ, բայց ես ինչպէս ընկեր պարտք եմ համարում ինձ գիտեցած խորհուրդս տալ քեզ։ Իմացիր, Կոստանդ, որ միշտ պարտական չեն քեզ պահելու քո ծնողները։ Դու ինքդ էլ ունես քո պարտականութիւնները դէպի նրանք։ Թողնենք այն պարտականութիւնները, որ մենք ունենալու ենք դէպի մեր նմանները։ Դու այժմ 20-21 տարեկան տղայ ես. այժմ քո այն ժամանակն է, երբ գիմնազիական կուրսդ աւարտած պէտք է լինէիր։ Խնդրեմ, ինձ մի օրինակ բերիլ, իմ հանդամանքներս այլ էին։ Ուսուցիչները քո ընդունակութիւնները, ինչպէս լսում եմ, խոստովանվում են, բաւական էր, որ միայն դու աշխատասիրութիւն ունենայիր։ Կոստանդի համբերութիւնը, երևում էր, որ հատնելու վրա էր։ Իմ վերջին խորհուրդս այս է, Կոստանդ—շարունակեց Արամը, որ դու և քո փոքր ընկերները մի միջոց փնտռէք կրկին գիմնազիա մտնելու։ Ես իմ կողմից խոստանում եմ իմ օգնութիւնս տալ ձեզ։ Եթէ կը լսես իմ խորհուրդս, չատ լաւ.. իսկ եթէ ոչ, մնաս բարև։ Այսպէս ասաց Արամը յուսալով, որ իր խօսքերը կունենան նշանակութիւն։—Էհ, բան չունես կորիր է։ Քո խորհուրդները ինձ պէտք չեն։ Արամը դուրս գնաց տանից, առաջուց վեր առնելով իր գլխարկը։ Սրա խօսքերը մի կէս ժամ մտածութեան պատճառ դարձան Կոստանդին։ Նա մտա-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՔՈՒԹԱՅԻՍԻՑ

—

Փետրվարի 11

Պատերազմը ինչպէս ամեն տեղ, նմանապէս և Քութայիսում, զգալ տուեց ժողովրդին իր ներկայութիւնը, թանգացնելով ամեն ինչ, որ մարդուն անհրաժեշտ է իր կեանքը պահպանելու համար։ Իմ ասածս հաստատելու համար, բաւական է մի անգամ անցկենալ այն տեղով, որտեղ որ կիրակի և ուրբաթ օրերը գիւղացիներ, իրանց հետ բերած զանազան մթերքը, իրանց առաջ դարսած վիճում են քաղաքացու հետ։ Վերջինը յանդիմանում է գիւղացուն, իր մթերքին թանգ գին դնելու համար, ասելով՝ «Ձեզ մօտ Աստուած չը կայ, մթթէ կարելի է, մթթէ երբ և իցէ լսած է, որ այսպիսի հաւիկը մի ռուբլ ես գին դնում, այն ինչ մենք ոչ մի ժամանակ 30—40 կոպէկից աւելի չենք վճարել. ձեր այդ վարմունքը ճիշդ ցոյց է տալիս ձեր անխղճմտանքութիւնը» (պ. «Միքէլաձէն» եթէ այս խօսակցութիւնը լսէր Հայաստանում, հայ ռամիկի վերաբերութեամբ, իսկոյն առանց շատ մտածելու կը բղաւէր, որ հայերը հարստահարողներ են, իսկ նրա ազգակից—իմէրել ռամիկը որ հայ չէ ինչի է հարստահարում Քութայիս նահանգի բնակիչներին)։ «Պարոն, ասում է գիւղացին, մթթէ ձեզ մինչև այժմ դեռ յայտնի չէ, որ պատերազմը ստիպեց մեզ ամեն բան թանգացնել՝ մէկի տեղ երեք—չորս գին դնել և մթթէ իմ կողմից յիմարութիւն չի լինի աւելի էժան ծախել, քանի որ ես ուզածիս համեմատ կարող եմ ծախել. իսկ եթէ ձեր կարողութիւնը չէ ներում այսքան թանգ վճարել մի հաւին, ով է ձեզ զօրում—դուք ձեզ համար, ես ինձ համար, մնաք բարեաւ։ Քութայիսեցին լսելով այսպիսի խօսակցութիւնը գիւղացուց, միանգամայն չընկկվում և էլ խօսք չէ գտնում պատասխանելու, լուռ ու մունջ թողնում է իմէրելին իր հաւով և շուտով խառնվում է բազմութեան մէջ, չը կամենալով տեսնել այդ յանդուգն գիւղացու երեսը։ Այսպիսի երևոյթը, ինչպէս պատմում են ծերերը, երբէք չէ պատահած Քութայիսում, մինչև անգամ նախկին պատերազմի ժամանակ։ Այո, ներկայ պատերազմն է թանգութեան պատճառը, բայց այդ պատճառը չէ պայմանաւորվում նրանով, որ Քութայիսի նահանգը պատերազմական ոտի վրա է կանգնած, որ զօրքի մեծ բազմութիւն է կենտրոնացած այդ նահանգում. թէև չէ կարելի հերքել, որ թանգութեան պատճառը մասամբ զօրքի բազմութիւնն է։

Ամեն երևոյթ իր պատճառը ունի, ուրեմն այս երևոյթն էլ մի պատճառ կունենայ, որ ամեն մարդ չէ կարող նկատել, եթէ չը հետաքրքրվի։ Ես որ շատ հետաքրքրվում էի, ի հարկէ զանազան ենթադրութիւններ էի անում, մինչև որ դուայ իսկական պատճառը։

Փոթի-Թիֆլիսեան երկաթուղի չինելու օրից Թիֆլիսեցիք սկսեցին շուտ շուտ երևալ Քութայիսում, որտեղ առնում էին ամեն տեսակ մրթերք, Թիֆլիս տանելու համար. իսկ այժմ պատերազմ սկսելու օրից, երբ երկաթուղին աւելի մօտեցրին Քութայիսին, երկաթուղու ճիշդով, Թիֆլիսեցիք աւելի հեշտութեամբ կարողանում են կատարել իրանց ցանկութիւնը։ Ահա իսկական պատճառը որ Քութայիսում թանգութիւն է տիրում։

Այս երևոյթը, առանց կասկածի, մեծ վնաս է տալիս Քութայիսի բնակիչներին. սրա առաջն առնելու համար հարկաւոր է, որ տեղիս քաղաքային վարչութիւնը առանձին ուշադրութիւն դարձնէ, կարգադրութիւն անէ, որ ուրիշ տեղից եկող չարչիներին սաստիկ արգելվի Քութայիսում որ և իցէ մթերք առնելու, ուրիշ տեղ տանելու համար։ Այսպիսի կարգադրութիւնները իրագործելու համար պէտք է նշանակվեն այնպիսի անձինք, որոնց վրա քաղաքը կարողանայ յոյս դնել նրանց վրա դրած պարտաւորութիւնը ճշդութեամբ կատարելու համար։ Համոզված պէտք է լինեն Քութայիսեցիք, որ այդպիսի մի խիստ միջոցը թանգութեան վերջ կը դնէ և գիւղացիք էլ չեն համարձակվի թութակի պէս սերտած բառերը կրկնելու՝ «պատերազմն է մեզ ստիպել թանգ ծախել»։

Մեր կողմից անարդարութիւն կը լինի մեղադրել միայն իմէրէլ ռամիկին, իսկ բաց թողնել մեր պատուելի վաճառականներին, որոնք պատերազմը պատճառ բերելով, մեր վերջին կոպէկներ էին խլում։

Երբ պատերազմ յայտնվեցաւ, մեր պատուելիները մի և նոյն օրը սկսեցին ամեն ապրանքների գները աւելացնել։—Մթթէ այդ վարմունքը նրանց ներելի է,—ոչ, քանի որ նրանք այդ ապրանքը առած էին էժանութեան ժամանակ, ուրեմն եթէ ուզում ենք արդար դատաւորներ լինել, պէտք է մեր պատուելիներին մեղադրենք անվայել վարմունքի մէջ, դէպի հասարակութիւնը։

Բոլորովին ուրիշ կը լինէր, եթէ պատերազմը յայտնելուց երեք—չորս ամսից յետոյ բարձրացնէին իրանց ապրանքների գները. այն ժամանակ մենք կարող էինք ենթադրել, որ հին ապրանքը հատել է, իսկ նոր ապրանքի բերելը Ռուսաստանից մեծ ծախսեր է պահանջում, կովկասեան սարերով անցկացնելու համար, որովհետև Սև ծովի վրա նաւագնացութիւնը պատերազմի պատճառով կանգնեցրած էր. այն ժամանակ էլի կարելի էր ներել, թէև ոչ բոլորովին, այլ մասամբ։

Երևակայեցէք, ընթերցող, այն ժամանակ, երբ երեք-չորս ամիս անցկացաւ պատերազմը յայտնելու օրից, երբ մեզանից ամենքը հարկաւորութիւն ունէինք ամենաանհրաժեշտ մթերքի, որոնք գտնվում էին մեր պատուելիների ձեռին—էլ անկարելի էր նրանց մօտենալ՝ սաստիկ թանգութիւն էր տիրում, օր ըստ օրէ գները բարձրացնում էին, այնպէս որ շատերը սարսափելով, իրանց ցանկութիւնները սանձում էին, և հրաժարվում էին այնպիսի մի բանի ուտելուց կամ խմելուց, որ մինչև այդ ժամանակ նրանց համար, համարեա, հացի և ջրի տեղ էր բռնում։ Այդ յանկարծակի գների բարձրացնելը ոչ թէ հիմնված էր ընդունված առևտրական հասարակ կանոնների վրա, այլ մեր պատուելիների կամայականութեան վրա։

Պէտք է խոստովանած, որ այս վերջին ժամանակ, երբ խաղաղութեան լուրը հասաւ, մեր վաճառականները յանկարծ կակղեցան և իրանց ապրանքների գները ցածացրին, վախենալով որ շուտով Օդէսայից չոգենաւ պէտք է գար և եթէ իրանք չէժանացնէին, նրանց տեղ ուրիշները կը յայտնվէին և մեծ վնասներ կը հասցնէին։ Իսկ ինչ որ վերաբերում է գիւղացիներին, նրանք չարունակում են իրանց ընդունված մեթոդը գործ դնելու, որովհետև չոգենաւը նրանց արտադրած մթերքը չէ բերում Օդէսայից։

Այսօր Քութայիսում ծախվում են հետևեալ մթերքը այս գներով՝—չաքար 7 ր. 50 կ. պուդ, —չաքարաւազ 6 ր. 50 կ. պ.—մոմ 13 ր. 50 կ. պ.—սուրճ (Մօկկոյի) 26 ր. պ.—ալիւր (կրուպչատկա) № 1 13 ր. պարտիով, գրվանքով 18 ր. պ.—№ 2 կրուպչատկա 12 ր. պարտիով, գրվանքով 15 ր. պ.—տեղական ալիւր բաթման (երկու պուդ) 75 կ.—գետնախնձոր (Ախայցխայի) 2 ր. պ., տեղական 1 ր. 60 կ. պ.—սոխ 2 ր. պ.—կաղամբ 2 ր. 40 կ. պ.—միս (ամեն տեսակ) 10 կ. մի գրվանքայ—պանիր 25 կ. գր.—հաւկիթ 5 կ. երկու հատ.—հնդկահաւ 2 ր. մէկը—որձատ (ՔԱՊԼՈՒՆ) 1 ր. 20 կ.—փայտ 25 ր. քառակուսի սաժին։

Մի հայ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ գրում են ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ, որ մօտ 40 աչակերտ թողել են ճեմարանը, տեղափոխվել են գիւղը և չը նայելով ճեմարանի վարչութեան բոլոր աշխատանքին չեն կամենում վերադառնալ։ Ասում են, որ աչակերտները մեզ անյայտ պատճառներից դրդված ծեծել են ՃԵՊԵՃԵԱՆ ուսուցչին։ Չէ կարող արդեօք Էջմիածնի հոգևոր իշխանութիւնը մեկնել, թէ ինչ է աչակերտների անբաւականութեան պատճառը։ Ճեմարանի աչակերտները բոլոր հայաբնակ քաղաքներից են, ուրեմն ուսուցիչները պէտք է զգոյշ վարվեն դրանց հետ, եթէ ոչ աչակերտների համբերութիւնը կարող է հատնել և այն ժամանակ հայ երեխաների բողոքը կարող են լսել նրանց ծնողները։

—

Մեր ԵՐԵՒԱՆԻ նամակագիրը հաղորդում է, որ Երևանում նոր բացված օրիորդաց ուսումնարանը Սահականուշեան է անուանվում։ Վարժուհու պաշտօնը կատարում է Թիֆլիսի հասարակութեան յայտնի օր. Հեղինէ Տէր-Գրիգորեանը, որ Գայանեան ուսումնարանի առաջին վարժուհիներից մինն էր։ Ցանկալի կը լինէր, գրում է նամակագիրը, որ օրիորդի դրամական վարձատրութիւնը այնպիսի չնչին և աննշան չը լինի, ինչպէս հոգևոր դպրոցի ուսուցիչների վարձատրութիւնը։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեր նամակագիրը գրում է հետեւեալը։ «Այստեղ շատ են խօսում քաղաքային վարչութեան մտցնելու վրա։ Վարչութեան համար արդէն տուն է վարձած և բոլոր սկզբնական պատրաստութիւնները տեսնված են։ Երբ կը լինի Դումայի առաջին նիստը, կը հաղորդեմ նրա մասին։»

—

Ճանապարհորդները պատմում են որ ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԻ շրջակայքում տարածված է ձիերի մի տեսակ հիւանդութիւն որ հետևեալ նշաններ ունի՝ կենդանին ցաւը զգալուն պէս ընկնում է և սաստիկ սկսում է քրտնել, և այդ քրտինքը գարշելի հոտ է արձակում։ Երկու ժամվայ միջոցում կենդանին սատկում է։

—

Արդէն երկրորդ անգամն է որ այս տարի պատահում են ձիւնի կոյտերի փլումներ Կովկասեան սարերի վրա։ Առաջին անգամ 17 հոգի մնացին ձիւնի փլատակների տակ, որոնցից միայն 8 հոգի կենդանի մնացին, իսկ 9 հոգի ձիւնի տակից մեռած են հանվել։

—

ՇԱՀՆԱԶԱՐ հայ-կաթոլիկ գիւղից մեզ գրում են՝ «Հակառակ այն մտքերին, որոնց տարածել են հայ գիւղացիների մասին, իբր թէ նրանք ամեն բան թանգ են ծախում ռուս սոլդատներին, կը համարձակվեմ պատմել հետևեալը։ Շահնազար գիւղի մէջ կայ 250 հոգի կազակ զօրքեր և 300 ձի, որոնց թէ մարդիկներին և թէ կենդանիներին հայ գիւղացիները կերակրում են իրանց հաշուով։ Գիւղացին տալիս է առատաձեռնութեամբ իր հացը, ջուրը, իւղը, պանիրը, հաւերը և հաւկիթները։ Կազակները սաստիկ գոհ են այդ տեսակ հիւրասիրութենից։ Երբ որ մի գիւղացու տան մէջ պակասում է ալիւրը, տան տիկինը շտապում է գնալ հարևանի տանից ալիւր փոխ ուզելու, ասելով՝ «ի սէր Աստուծու, մի պուդ ալիւր ինձ փոխ տուէք, որ կազակ աղբէրս անօթի չը մնայ, մինչև որ մարդս քաղաքից դառնայ։» Այսպէս հայ գիւղացին պահում է ձրիաբար ոչ թէ կազակներին, բայց և կերակրում է նրանց ձիերին խոտով և դարմանով։ Միայն գարին է որ տէրութիւնը փողով գնում է գիւղացիներից։ Դարձեալ և այն սոլդատները որոնք անցնում են մեր գիւղերում ուղևորվելով Ալէքսանդրապոլ, կամ այն տեղից յետ գալով, միշտ ստանում են գիւղացիներից ձրիաբար հաց և պանիր, ու զանազան ուտելիք-

---

բերեց իր հօրը, մտածեց թէ, արդեօք ինչպէս կընդունի նա իր ուսումնարանից դուրս հանելու լուրը. կը վշտանա՞յ, արդարև, իր վրա թէ ոչ, և թէ ո՞ր աստիճան...։ Իր մտածմունքները ցրել ուզելով, նա վեր առաւ ֆլէյտը որի վրա ածել շատ կը սիրում, և սկսեց փչել մինչև այն ժամանակ, երբ գինով ծանրացած գլուխը ընկաւ բարձի վրա և նա քնեց խոր քնով մինչև միւս առաւօտը։

IV

Կոստանդը քնոտ աչքերը բաց արած, անկողնի մէջ մնաց երկար ժամանակ պառկած։ Նա մտաբերեց իր երեկվայ արած ուրախութիւնը ընկերների հետ և այն լուրը, որ բերեց նրան Արամը և թէ ինչպէս վերջինիս դուրս էր արել տանից, նրա տուած խորհրդի համար։ «Աւետարան է կարդում գլխիս, ասաց ինքնահաճ ծիծաղով Կոստանդը և վեր կացաւ տեղից։

—Մարո՛ւք, ես ուզում եմ նամակ գրել հօրս, փողերս դու գիտես, որ հատել են. ասաց նա իր ընկերին, թէյից յետոյ, բայց մեզ դուրս արեցին գիմնազիայից ես վախում եմ, որ մերոնք լսեն էս լուրը։

—Էս հեռու տեղում, ո՞վ է իմանում ջանմ, ինչ ես խօսում. բայց որքան էլ լինի, պէտք է զգոյշ վարվել։ Կոստանդը մի բան մմմաց իր մրքում և գրեց հետևեալ նամակը իր հօրը. «Գորովագութ հայր և ազնիւ մայր, Ձեր նամակը ստացայ, որով ուզում էք իմանալ տեղեկութիւններ իմ առաջադիմութեանս համար։ Ես պարապում եմ այժմ ամենայն սիրով, աշխատասիրութեանս համար գովում են ինձ ուսուցիչները։ Այն գրքերը, որոնք առայ ես վերջին օրերս, հատեցրին իմ փողերը։ Այս պատճառով, խընդրում եմ հասցնել ինձ մի 70 ռուբլ փող։ Այստեղ ամենայն ինչ թանգ է։» Սովորական ողջոյներից յետոյ տնեցիներին, նամակը վերջացաւ այսպէս՝ Ձեզ միշտ սիրող ու ամենախոնարհ որդի Կ. Պողոսեան։»

Նամակը կնքելով, Կոստանդը դուրս եկաւ տանից և տարաւ այն փոստան։ Արամը պատահեցաւ նրան նոյն օրը նստած սահնակի մէջ մի օրիորդի հետ. սրնթաց ձիերը անցան.... Մի դառը ժպիտ շարժեց Արամի շրթունքը և նա մտածմանց մէջ ընկղմած, գնաց դէպի իր աղքատ, սառը խրճիթը։

V

Մեր նկարագրած սենեակը, ուր մնում էր Արամը, ներկայացնում էր մի տխուր պատկեր ձմեռը։ Երկու դէպի պարտէզ նայող պատուհանները ամուր փակված էին և դիմացի պարտէզը կորցրել էր իր գեղեցկութիւնը։ Երեկոները ճրագները վառվելուց կէս ժամ անցած, մտնում էր մեր ուսանողը իր սառն անկողինը և այդպէս ճրագը դրած գրասեղանի վրա պարապում էր մինչև ժամի 11—12-ը։ Առաւօտները նա շուտ աչքերը բաց էր անում, նայում էր պատուհաններին և տեսնում էր, որ ցրտի չնորհիւ ապակիները պատած էին լինում ներսից բնութեան զանազան նկարներով՝ ծառեր, խոտեր, մի այնպիսի պէյզաժ, որ դժուար թէ նկարչի երևակայութիւնը և սովոր ձեռքը դուրս բերէր մի այդպիսի բան։ Այսպիսի դառն կեանքի մէջ Արամը ներկայացնում էր իր մտքի մէջ ապագայ կեանքի աւելի դառը նկարները՝ թէ ինչպէս պէտք է լինի նրա վիճակը համալսարանում և թէ արդեօք դրամական պակասութիւնը ինչպէս պէտք է յաղթել այդ գիտութեան տաճարը մտնելու համար։ Մտածում էր մասնաւոր անձի իրան խնամատար լինելու վրա, մտածում էր մի որ և է ընկերութեան ձեռնտուութեան վրա. մտածում էր, որ գուցէ մեր հոգևոր հայերը օգնութեան ձեռք հասցնեն իրան և այս մտքերի մէջ խորասուզված նա երկար ժամանակ անկողնում, անհանգիստ հիւանդի նման մի կողքից միւս կողքի վրա էր շրջվում, ճրագը հանգցնելուց շատ յետոյ։

Անցաւ նրա համար երկրորդ ձմեռը այն դրութեամբ և նա տարաւ մարտիրոսաբար իր այս նեղութիւնները, թողնելով իր յոյսերի իրագործելը անյայտ ապագայ կամքին։ Մօտեցաւ գարունը, հասաւ մայիսը, երբ նա պէտք է վերջնական հարցաքննութիւն տար գիմնազիական ամբողջ կուրսից։ Երկար պատմելու չեմ, ընթերցող, թէ ինչպէս անցան այդ հարցաքննութիւնները Արամի համար. միայն այս կասեմ, որ նա աւարտելով գիմնազիական կուրսը արժանացաւ մի արծաթեայ մեդալի։ Արդէն նա պատրաստվում էր վերադառնալ իր փափագելի հայրենիքը երբ նա ճաշի ժամանակին անցնելիս զբօսարանից, ուր ոչ մի մարդ չէր երևում, նկատեց խիտ ծառերի մէջ Կոստանդին մի օրիորդի հետ։ Արամի ներկայութիւնը այդ միջոցին անյայտ էր նրանցից։ Կոստանդը հագնված էր այս անգամ աւելի շռայլ, բայց ոչ նշանաղգեստի մէջ։ Արամը, մի փոքր էլ մօտենալով, լսեց նրանց թէև ցածր, բայց տաք սիրահարական խօսակցութիւնը։ Արամը, չուզելով նկատելի լինել, ծռեց իր ճանապարհը դէպի մի ուրիշ ծառուղի և կամաց-կամաց գնաց տուն։ Նա լսեց մի քանի օրից յետոյ, որ Կոստանդը, սիրահարված մի չիկահեր օրիորդի վրա արդէն պատրաստվում էր նշանադրութեան հանդէսը կատարելու համար... Արամը շուտով ճանապարհ ընկաւ դէպի իր հայրենիքը, ուր մօտ երեք տարի կարօտով սպասում էին նրան անհամբերութեամբ նրան սիրող հայրն ու մայրը և ազգականները։ Համալսարան գնալուց առաջ այս վերջին անգամ տեսակցութիւնն էր լինելու Արամի համար։ Նրա սրտակից ընկերների ժողովը, որ գումարվել էր նրան ճանապարհ դցելու, նրանց գրկախառնութիւնները ու համբոյրները մի առանձին քաղցր տպաւորութիւն գործեցին Արամի սրտում։ Նա երկար ժամանակ աչքերը յետ դարձած նայում էր ընկերների վրա, որոնք գլխարկներով վերջին մնաս բարով էին անում նրան մինչև որ վերջապէս ամեն բան ծածկվեցաւ նրա աչքերից։ Գնա, խեղճ Արամ, արդեօք մի օգնութեան ձեռք կը լինի քեզ քո նպատակին հասնելու համար, թէ ոչ...։

Յով. Աթանասեանց

ների պաշար հաւաքում են ճանապարհի համար։ Եթէ գիւղացիներից մինը յանդգնի փողով հաց ծախել սօլդատներին, միւս գիւղացիները յանդիմանում են նրան ասելով, որ ինչպէս սօլդատը իր արիւնը չէ խնայում թագաւորի համար, այնպէս էլ գիւղացին չը պէտք է խնայի իր հացն ու ջուրը զինուորներին տալու։»

—

Մեզ խնդրում են յայտնել որ ԹԻՖԼԻՍԻ Ներսիսեան հայոց ազգային-հոգևոր դպրոցում հոգաբարձական խորհրդարանի մէջ մարտ ամսի 22-ին, երեկոյեան 7 ժամին կը լինի երկրորդ անգամ աճրդախօսութիւն (առանց կրկնաճրդախօսութեան) կապալով տալու հանգուցեալ Գրիգոր Շերգիլեանցից ընծայած կրպակը։ Իր նկուղով, որ գտնվում է Հայոց, նոյն է Միջին փողոցում, Պայմանաթուղթը (կօնդիցիա) կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10 ժամից մինչև 12 ժամ։

—

Մեզ գրում են ՍՏԱՎՐԱՊՕԼԻՑ. «Մեզանում անձնասպանութիւնը սովորական բան է դառնում։ Նորերումս իգական գիմնազիայի վեցերորդ դասատան մի աշակերտուհի ինքն իրան սպանեց ատրճանակի հարուածով։ Պատճառը յայտնի չէ։ Նոյն կրկնեց քանի մի ժամանակից յետոյ արական գիմնազիայի վեցերորդ դասատան մի գիմնազիստ։ Ասում են որ երիտասարդը սիրահարված է եղել մի աղջկայ վրա։

—

ԲԱԳՈՒ քաղաքից մեզ հաղորդում են հետեւեալ լուրերը. «Փետրվարի 19-ին, կիրակի օրը, այստեղ եղաւ հայոց Թատրոնական ներկայացումն յօգուտ Շամախու թեմական հոգևոր դպրոցների։ Ներկայացումն շատ անհամ անցաւ։ Եթէ նպատակը բարեգործական չը լինէր, չարժէր ձրիապէս էլ գնալ։—Բագուի փողոցները սարսափելի ցեխոտ են։ Ի՞նչ կը լինի մեր դրութիւնը, երբ օրերը տաքանալով, փողոցները կը չորանան և ցեխը թող կը դոյացնէ։ Չը գիտենք այդ մասին հոգում է արդեօք մեր տեղական վարչութիւնը։—Գլխաւոր մթերքների գները այս են՝ ցորենի պուդը արժէ 80 կոպ., գարին 80 կոպ., ալիւրը 1 ռուբլ, մսի ֆունտը 8 կոպ., իւղը 15—20 կոպ., ձուի հատը 2 կոպ., ֆոտոգէնի պուդը 80 կոպէկից մինչև 1 ռուբլ, սև նաւթը 4—5 կոպէկ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Համայնքների խորհրդարանում մարտի 4-ին (փետրվարի 20) վաւերացված բիւդժէտից քաղում ենք հետեւեալ տեղեկութիւնները։

367,000 անգլիական ստերլինգ ոսկի որոշած է այս տարի ծովային թնդանօթներ, տորպէդներ և վառօդաբամբակ շինելու։ Այս տարի կը շինվեն 141 դաշտային թնդանօթ և 68 ծովային թնդանօթ. բացի սրանից կը շինվեն երկու թնդանօթ, իւրաքանչիւրը 81 անգլիական տոն ծանրութեամբ և քսան և երկու թնդանօթ, իւրաքանչիւրը 38 տոն ծանրութեամբ։

Միլեցիայի թիւը կը հասնէ 126,778-ի. սրանցից 40,000-ը այս տարի հաւաքված են։ Ամեն կողմից միլեցիաները ցանկութիւն են յայտնում որ շուտով դրօշակի ներքև կանչվեն երբ հարկաւոր լինի իրանք բոլորովին պատրաստ են ծառայելու։ Թէպէտ միլեցիայի պահեստի զօրքերի թիւը մի քիչ պակասած է և գործող բանակի պահեստի զօրքերն էլ բաւականի շատ չեն, այնու ամենայնիւ առաջին կարգի պահեստի զօրքը բաղկանում է 50,000 մարդկերանցից և երկրորդ կարգի պահեստի զօրքեր էլ կան որոնք երկրի պաշտպանութեան համար են որոշած։ Օրից օր աւելանում է նաև այն կամաւորների թիւը որոնք օրէնքի համեմատ պարտաւոր եղած են ծառայելու. նրանց թիւը հասնում է այժմ 183,078-ի, բացի այն 10,216-ից որոնք բոլորովին ինքնայօժար և կամաւորապէս մտած են զինուորական ծառայութեան մէջ։ 5195 կամաւորներ հարիւրապետի (օֆիցէր) և 11,000-ից աւելի կամաւորներ յիսնապետի աստիճանն են ստացել։ Կառավարութիւնը դիտաւորութիւն ունէ որ այս տարի սովորականին համեմատ աշնան եղանակում զինուորական կրթութիւն անել տուած ժամանակ, շատերին պատրաստէ զինուորականութեան և Սալիզբիւրիի շրջակայքում մի զօրաբանակ կազմէ որ հարկաւոր եղած ժամանակ պատրաստ լինի արտասահման գնալու։ Այդ զօրաբանակին պատերազմի պատրաստ դրութեան մէջ դնելը կարժենայ 80,000 անգլիական ստերլինգ ոսկի։

Այս տեղեկութիւնները Համայնքների խորհրդարանին յայտնած է պ. Հարդին, պատերազմական գործերի մինիստրը, հետևեալ խօսքերն ասելով.

«Պարոններ, ձեզ ներկայացրած բիւդժէտս պատրաստված է խաղաղութեան տեսութիւնով։ Մենք մեր հաշիւներում մտցրած չենք այս րոպէիս եղած պատերազմական երկիւղները։ Ուրեմն կառավարութիւնը չէ կարող այս բիւդժէտով պատերազմի ձեռք դարկել։ Այնու ամենայնիւ խոստովանում եմ որ այնպիսի ծանր ծախքեր նշանակված են նրա մէջ որ այլ տարիներ ներկայացված բիւդժէտների մէջ չը կային. բայց այդ մի քանի տեղ նշանակված մեծ գումարները որոնք այս տարի աւելի խնդրում ենք ձեզանից, յատկացած են մեր բանակի համար նոր կարգադրութիւններ, վերանորոգութիւններ անելու, որոնք բացարձակապէս հարկաւոր եղած են։»

«Խօսքս վերջացնում եմ, պարոններ, ձեզ հաստատելով որ անգլիական երկիրը կատարեալապէս ոգևորված է զինուորական ոգով. ես չեմ ուզում ասել պատերազմասէր ոգով, այլ վերին աստիճանի հայրենասիրական ոգով։ 1878 թւականին էլ, ինչպէս Խրիմի պատերազմի ժամանակ, մենք կը տեսնենք որ մեր հայրենակիցները ամեն կողմից կը դան կը շարվեն դրօշակների ներքև, եթէ հարկը պահանջի։ Յոյս ունեմ որ մեր զօրքերը չեն հրաւիրվի պատերազմի. բայց հաստատ համոզված եմ որ եթէ այդպիսի հրաւէր հարկաւոր լինի, մեր ցամաքային և ծովային զօրաբանակները, ինչպէս անցեալ ժամանակներում, նոյնպէս և այժմ պատիւ կը բերեն իրանց հայրենիքին։» (Սաստիկ ծափահարութիւններ)։

ԻՏԱԼԻԱ

—

Իտալական պարլամենտը բացվեցաւ։ Գահական ճառի մէջ խոստացված է թէ ներքին վերանորոգութիւններ կը լինին և տուրքերը կը պակասեն կամ կը փոփոխվեն։ Արևելեան հարցի վերաբերութեամբ, Ումբերտ թագաւորը ասում է թէ Իտալիան իր կատարեալ չեզոք դրութիւնը կը պահպանէ և կօնդրէսի գումարված ժամանակ ինքն էլ կը մասնակցի։ Պիոս IX-ի վրա յարգանքով խօսում է և յայտնում է թէ պապի փոփոխութիւնը կատարեալ հանդարտութենով է եղած։ Ճառը վերջանում է ասելով թէ կառավարութիւնը միշտ կաշխատէ կրօնի և հաւատի յարգանքը համաձայնեցնել պետութեան իրաւունքների և քաղաքակրթութեան մեծ սկզբունքների հետ։ Այս խօսքերը սաստիկ ծափահարութիւններով ընդունված են ժողովականներից։

Հռոմից մարտի 7-ին (փետրվ. 23) գրում են որ նախորդ երեկոյ մինիստրների մի ժողով է եղել և այդ ժողովից յետոյ, ներքին գործերի մինիստր պ. Կրիսպին հրաժարական է տվել։ Մինիստրների նախագահ պ. Դէպրէտիս ժամանակաւորապէս կը կատարէ ներքին գործերի մինիստրութեան պաշտօնը։

Պ. Կրիսպիի հակառակորդներից մի քանիսը թշնամութիւնը այն աստիճանի էին հասցրել որ այդ մինիստրին ոչ միայն քաղաքական կեանքը, այլ և ընտանեկան կեանքը լրագրական նիւթ էին արել։ «Lombardia» լրագիրը հրատարակել էր հետևեալ լուրը. «Հռոմում մի մեծ սկանդալ է լինում։ Ասում են թէ բազմակնութեան պատճառով դատ կը բացվի այժմեան մինիստրներից մէկի դէմ որ 1860 թւին Մալտա կղզում մի կնոջ վրա ամուսնանալուց յետոյ, որը դեռ կենդանի է, մի ուրիշ կնոջ վրա էլ ամուսնացել է։» Այդ մինիստրը պ. Կրիսպին էր։ «La Riforma» լրագիրը որ պ. Կրիսպիի օրգանն է, պատասխանում է թէ «Այդ լրագիրները յարձակվելով պ. Կրիսպիի վրա, ուզում են արատաւորել ոչ թէ նրա անհատական, այլ քաղաքական կեանքը։ Պ. Կրիսպիի համար խօսված ամուսնութիւնը 1854 թւին Մալտա կղզում, վաւերական չէ, ինչպէս որ այդ կը հաստատվի երբ գործը դատարանին ներկայանայ։ Նրանք որոնք ուզում են ցոյց տալ իրանց իբրև բարոյականութեան պաշտպաններ, ոչ միայն իրանց սահմանից դուրս ընտանեկան գաղտնիքների միջամտում են, այլ և ցոյց են տալիս որ բոլորովին անծանօթ են այն եկեղեցական կանոնների և քաղաքական օրէնքների հետ որոնք 1854 թւին գործադրվում էին երկու Սիցիլիաների թագաւորութեան երկիրներում։»

Լօրդ Արէլկօրն մեծ հանդէսով Ումբերտ թագաւորին յանձնել է ծնրակապի պատւանշանը (ordre de la Jarretière) որը ուղարկել էր Անգլիայի թագուհին։ Այդ հանդէսին ներկայ են գտնվել բոլոր մինիստրները, բարձրաստիճան պալատականները և անգլիական դեսպանը։

Հռոմից հեռագրում են որ Վատիկանի հետ յարաբերութիւն ունեցող կառավարութիւնների կողմից նկատողութիւններ լինելով կարդինալ Սիմէոնիի պետական քարտուղար ընտրվելու համար, Սիմէոնին փոխվել է և նրան յաջորդել է կարդինալ Ֆրանկին։ Այդ հեռագիրը աւելացնում է թէ պապը և իր նոր մինիստրը ուզում են հաշտեցնել, որչափ կարելի է, եկեղեցու շահերը պետութեան շահերի հետ։

Նորընտիր պապի թագադրութիւնը այնչափ հանդիսաւոր չեղաւ որչափ կարծում էին կղերականները։ Կարդինալները, Վատիկանում եղած դեսպանները իրանց ընտանիքներով և Հռոմի արիստոկրատներից մի քանիսը միայն ներկայ են եղել հանդիսին։ Հազիւ թէ հաղարի չափ ժողովուրդ է գտնվել Ս. Պետրոսի հրապարակում։ Հռոմի պապական լրագիրները ամեն կողմ համբաւ էին տարածել և փողոցներում պատերի վրա յայտարարութիւններ էին կպցրել թէ նոյն երեկոյին մեծ հանդէս և լուսավորութիւն կը լինի Լևոն XIII-ի թագադրութեան համար։ Բայց դրէթէ ամեն տեղ լռութիւն էր տիրում և մի քանի տներից միայն լապտերներ էին կախված։ Այնու ամենայնիւ, ժողովուրդը մի յեղափոխական ցոյց արեց այն երեկոյին։ Թէօդոլի եպիսկոպոսը իր պալատից կախ էր արել պապական գոյներով (դեղին և սպիտակ) փոքրիկ կանթեղներ։ Հետզհետէ բազմութիւնը շատանալով պալատի առջև, նրանցից մի քանիսը սկսել են սուլել և թշնամական ձայներ բարձրացնել։ Այդ ձայները լսելով, ուրիշ կողմերից էլ շատերը եկել են և 3,000-ից աւելի բազմութիւն սկսել են քարկոծել եպիսկոպոսի պալատի պատուհանները, խորտակել ապակիները և բղաւել թէ «Կործանվի՛ Լևոն պապը. ջնջվի՛ն պապական աթոռի համար եղած երաշխաւորութիւնները. կեցցէ՛ Իտալիան։» Ժողովրդի արած ցոյցը այն աստիճան սաստիկ է եղել որ պոլիցիան տեսնելով թէ անկարող է զսպել նրանց, իսկոյն զօրքեր է բերել տուել։ Բազմութիւնը Թէօդոլիի պալատի ապակիները խորտակելուց յետոյ, գնացել է այլ պալատների առջև որոնք լուսաւորված էին և նոյն ցոյցերն է արել։ Յետոյ սկսել են գնալ դէպի Սէնտ-Անժ կամուրջը, բղաւելով թէ «Վատիկան գնա՛ նը, պապը վայր գցե՛ նք։» Կառավարութիւնը շուտով հասել և ժամանակ չէ թողել որ աւելի ծանր անկարգութիւններ լինեն։ Բազմաթիւ զօրքեր շարվել են Սէնտ-Անժ կամուրջի վրա, ճանապարհ չեն տվել բազմութեան որ գնայ Վատիկան և ցրվել են նրան։ Այդպէս հանդարտութիւնը նորից տիրել է ամեն կողմ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Հիրչի Հեռագրական Ընկերութիւնը» կ. Պոլսից հաղորդում է փետրվարի 26-ից (մարտի 10-ին) որ թիւրքաց գերիների յետ դարձնելը կը սկսվի մարտի 4-ին (16-ին). Նրանցից 40,000 կուղարկվեն Բօսնիա և Հերցեգովինա։ Սուլթանի «Պէրտէվ—Պիալէ» նաւը մարտի 14-ին (26-ին) կուղարկվի Օդէսա Օսման-փաշային բերելու համար։

—«Times» լրագրին Բէրլինից հաղորդում են մարտի 6-ից հետեւեալը։ Ուղարկում եմ փոստայով Անգլիա այն դոկումենտը, որի մէջ ինչպէս ես կարծում եմ, կատարելապէս արտայայտված է զարգացած հայերի կարծիքը այն բանի վերաբերութեամբ, թէ ինչ ազդեցութիւն պէտք է գործէ նրանց երկրի վրա թիւրքիայի և Ռուսաստանի մէջ կայացած դաշնադրութիւնը։ Մէկ հայ գրում է ինձ, որ իր հայրենակիցները վախենում են, որ Ռուսաստանը կարող է քաջալերել (?) թիւրքաց անկարգութիւնները, որ այս բանով իր համար օգուտ քաղէ և աստիճանաբար կլանէ բոլոր Հայաստանը։ Այս պատճառով հայերը աղաչում են և խնդրում Անգլիային օգնել կօնֆէրէնցիայում, իրանց համար աւտօնոմիա ստանալու համար Եւրոպայի երաշխաւորութեամբ, կամ գոնեա նրանից ապահովութիւն ստանալով։ Նրանք յոյս ունեն, որ այս աւտօնոմիան կը լինի արգելք ռուսների Հնդկաստանի անգլիական ճանապարհի վրա արշաւանքի դէմ և որ հայերը իրանց ազգային բնութեան համեմատ աւելի սիրով կընտրեսան անգլիական քաղաքակրթութեան հետ, որը իսկական քաղաքակրթութեան պատկեր ունի, քան թէ ռուսաց քաղաքակրթութեան կեղծ տիպի (sic) հետ»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, մարտի 14-ին։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 95⅞ ռ., երկրորդ 95⅝ ռ., երրորդ 95 ռ. 50 կ., չորրորդ 95 ռ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմակը արժէ 226 ռ. 25 կոպ., երկրորդ 223 ռ., արևելեան 93 ռ. 25 կոպ., ոսկի 7 ռ. 83 կոպէկ։ Տրամադրութիւնը թոյլ է։

ԼՕՆԴՕՆ 13/25 մարտի։ «Times» լրագիրը տպել է, ինչպէս երևում է, մի պաշտօնական յօդուած, որի մէջ ասում է թէ լորդ Դէրբի շարունակում է պահանջել որ ռուս-թիւրքաց հաշտութեան դաշնագիրը ամբողջութեամբ ներկայացվի կօնգրէսին։ Դէրբի առաջարկեց այդ հարցը Ռուսաստանին, այսինքն Ռուսաստանը կը ներկայացնի արդեօք հաշտութեան վերաբերեալ դոկումենտները կօնգրէսին թէ ոչ։ Ռուսաստանը պատասխանեց բացասական կերպով։ Այս պատասխանով արգելք է դրվում այն միակ պայմանին, որի հիման վրա Անգլիան յօժար էր ուղարկել իր ներկայացուցչին Բերլինի մէջ լինելու կօնգրէսը։ «Times» լրագրին հեռագրում են Ս. Պետերբուրգից որ ինչպէս երևում է Ռուսաստանը առժամանակ ոչինչ պաշտօնական բողք չի ներկայացնի անգլիական նաւատորմի Մարմարեան ծովի մէջ ներկայութեան առիթով։ Ռուսաց զօրքերի նաւերի մէջ նստեցնելը կընդմիջվի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 մարտի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ թագաւորը ընդունեց Մ. Գ. Զերնիաեվին։ Ցայտնվում է արքայական բարեհաճութիւն Մոսկվայի, Օդեսայի և Վարշավայի վիճակային շտաբների անձանց, որոնք պատերազմի ժամանակ պարապում էին զինուորական գրաքննութեամբ։ Նոյն լրագրում տպված է Լևոն XIII-դ պապի նամակը, որի մէջ տեղեկացնելով թագաւորին իր գահակալութեան մասին, ցաւում է, որ Ռուսաստանի և Հռոմի պապական գահի մէջ փոխադարձ յարաբերութիւնները որոնք առաջ շատ բարեկամական էին, վերջին ժամանակ սառել են և դիմում է Կայսրի մեծահոգութեանը, խընդրելով հոգալ Ռուսաստանի կաթոլիկների վիճակի մասին։ Կայսրի պատասխանի մէջ ասված է՝ կրօնական համբերողութիւնը մի սկզբունք է որ Ռուսաստանում անխախտ պահպանվում է թէ պետական աւանդութիւններով և թէ ազգի սովորութիւններով։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴՈՒՐՍ ԵԿԱԻ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ

1. ԱՂՕԹԱՏԵՏՐ.—*աշխատասիրութիւն Ն. Տէր-Յակոբեանց, գինն է.* . . . . . 7 *կոպէկ*

2. ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐԿՏԱԿԱՐԱՆԻ Գ. Սիմէօնեանցի *գինն է* 60 »

Գումարով առնողներին զեղջուն կը լինի։

Հրատարակութիւնք **ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅԻ ՀԱՍ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ** 4—4

Կառավարութեան թոյլտուութեամբ այս փետրվար ամսի 18-ից բացվեցաւ ԹԻՖԼԻՍՈՒՄ, *Միքայէլեան կամուրջի վրա, Միրզոեվի տանը* № 1, 2, *նոր գրախանութ* «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅ» (Центральная книжная торговля) *անունով։ Գրախանութում վաճառվելու են ամենատեսակ դասագրքեր հայերէն, ռուսերէն և ուրիշ լեզուներով. նոյնպէս լինելու է մեծ ընտրութիւն ընթերցանութեան գրքերի։ ԳՐԱԽԱՆՈՒԹԸ նպատակ ունի իր ճշտութեամբ և ձեռնտու վաճառմամբ նպաստել կրթութեան գործին, մասնաւորապէս մեր հայ ուսումնարաններին։ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ կը ծախվին նմանապէս տեղական պարբերական թերթերը։ Պատուէրները կը կատարվին ամենայն արագութեամբ։ Անփող պատուէրները, մանաւանդ անծանօթ տեղերից, անկատար կը մնան։ Օտար քաղաքացիք կարող են դիմել այս հասցէով* Тифлисъ «Центральная книжная торговля Михайловскій Мостъ, домъ Мирзоева № 1, 2։

ԵՂԲԱՐՔ Ն. Գ. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ
Ս. ՏԷՐ-ԻՍՐԱՅԵԼԵԱՆ

7—10

Լոյս տեսաւ «ԱԻԱԶԱԿ ՕՏԵՎԻ ԳՈՐԾԵՐԸ» *կամ* «Հայրը ցանեց, որդին հնձեց» *անունով բրոշիւրան։ Գինն է 10 կոպ։ Ցանկացողները կարող են դիմել հետևեալ հասցէով.* Тифлисъ, Вильгельмъ Гроссъ, Столярная фабрика Ф. Зетцера, въ колоній. *Մենք ինքներս խոստովանվում ենք, որ մեր այս առաջին աշխատութիւնը թերութիւններ կունենայ, որովհետև որպէս անփորձ երիտասարդ շտապեցինք շուտով լոյս ընծայել։ Պատրաստ ունենք մի գրքոյկ* «ՈՐԲ ԴԷՈՐԳԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ» *վերնագրով։ Եթէ մեր նիւթական միջոցները կը ներեն, այդ ևս կը նուիրենք հայ գրականութեանը։* 5—8

ՊԵՐՃ ՊՈՒՇԵԱՆՑԸ *խնդրում է իր* «ԿՈՒՍԾԱԴԻԿ» *վիպասանութեան գործակալներին շտապել բաժանորդաթերթերն ուղարկելու մինչև ապրիլի մէկն։ Գրքի տպագրութիւնը վերջանում է և ստորագրողաց անունները պէտք է տպվեն գրքի վերջին։*

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՆՈՐ ՍՏԱՑՎԵԼ ԵՆ ՊԱՐՏԻԶԻ ԲՈՑՍԵՐԻ ԵՒ ԾԱՂԻԿՆԵՐԻ ՍԵՐՄԵՐ, *որոնք ծախվում են Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան կոմիսիոներ Լարշէի դէպօում, որ գտնվում է Գոլովինսկի պրոսպեկտի վրա* № 11։

5—10

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է, որ նրա ներկայութեամբ այս տարվայ մարտի 17-ին նշանակված է աճուրդ, առանց կրկնաճուրդի, այս տարվայ ապրիլի 1-ից Նաւթլուխի քաղաքային ամարանոցը ու արօտատեղի համար յարմար է, կապալով տալու համար։ Այս ամարանոցը 194 դեսիատին և 100 քառակուսի սաժէն տարածութիւն ունի։

1—3

Правленіе Тифлисскаго Общества покровитеьства животнымъ доводитъ до свѣдѣнія членовъ общества: 1) что общее собраніе, состоявшееся 20 февраля с. г., имѣя въ виду, что мѣстныя условія требуютъ выработки особыхъ правилъ для ковки животныхъ, постановило учредить коммисію, въ которую избраны: предсѣдателемъ *К. Д. Габаевъ*, членами: *Т. Г. Болотовъ*, *А. М Шеинъ-Фогель*, *Н. И. Мещерскій* и *Г. К. Смирновъ*, съ тѣмъ, чтобы въ эту коммисію были приглашаемы устабаши и лица, которыхъ коммисія признала-бы необходимыми; 2) что члены Общества и всѣ интересующіеся этимъ дѣломъ приглашаются ви общее собраніе 20 марта, въ $7^1/_2$ часовъ вечера, въ д. Читахова, на Сергіевской улицѣ, въ канцелярію конно-заводскаго округа, рядомъ съ отдѣленіемъ государственнаго банка: а) для выслушанія текущихъ дѣлъ; б) для выбора двухъ кандидатовъ въ члены правленія; в) для полученія утвержденныхъ Великимъ Княземъ Намѣстникомъ правилъ предохраненія животныхъ отъ жестокаго и дурнаго съ ними обращенія и г) взноса казначею А. Г. Сергѣеву членскихъ денегъ за 1877 и 1878 г.; а потому желательно, чтобы пожаловали на засѣданіе, по возможности, всѣ наличные члены общества.

1—3

„ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹ“

ԸՄՍԱԳԻՐ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՊՐԻԼ ԱՄՍԻՑ 1878 Թ. ՀԵՏԵՒԵԱԼ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ

Ա. *Դպրոցական խնդրի և ազգային դաստիարակութեան վերաբերեալ առաջնորդող յօդուածներ։ Դպրոցական գործի ներկայ դրութիւնը մեր մէջ։ Սկզբնական ուսումնարաններ տղայոց և օրիորդաց։ Մանկավարժական բովանդակութիւն ունեցող յօդուածներ։*

Բ. *Ուսումնարաններին վերաբերեալ տնօրէնութիւններ կառավարութեան և զանազան վարչութիւնների կողմից։*

Գ. *Մատենախօսութիւն և կրիտիկա դասական գրականց և մանկավարժական շարադրութիւնների։*

Դ. *Երևելի մանկավարժների կենսագրութիւններ և մանկավարժութեան պատմութեան վերաբերեալ յօդուածներ։*

Ե. *Այլ և այլք։—Թղթակցութիւններ։ Մանկավարժական ընկերութիւնների, խորհուրդների և ժողովների օրագրութիւնները։*

Զ. *Յայտարարութիւններ մատենագրութեան և առ հասարակ ուսումնարանական գործին վերաբերեալ։*

Այս գործի մէջ մեզ ընկեր և մշտական աշխատակից կը լինի պ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԳԻԱՆԵԱՆՑ, *տեսուչ Յովնանեան օրիորդաց ուսումնարանի։ Կաշխատակցեն մեզ նոյնպէս մեր ուսումնարանական գործի մէջ յայտնի փորձառու գործող անձինք։*

Տարեկան 12 *գրքոյկ, իւրաքանչիւրը* 4—6 *թերթ* (64—96 *եր.*)։ Տարեկան *գինն է* 6 *ռուբլ ամենայն տեղ։*

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ Редакція Армянскаго журнала Педагогическій Листокъ. Сололаки Садовая улица д. № 42.

Քաղաքիս մէջ ստորագրուել կարելի է պ. Ե. Ծատուրեանցի *խանութում «Դվորցովի փողոցում, պ.* Զ. Գրիգորեանցի *և պ.* Տէր-Ղևոնդեանցի *գրավաճառանոցներում։*

Խմբագիր և հրատարակող ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՄԱՐՏԻ 15. — ՏԵՂԵԿԱՑՈՒՑ — ԹԻՖԼԻՍ 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՅ (Մարտի 14-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլուամպերիալը)	7	80
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1350	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1200	—
Վիզրէնի 5% առաջի փոխառութեան տամ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիզրէնի »	235	—
Մարսելի կուրսը 265—	270	—
Լօնդոնի կուրսը Օդեսայի վրա.	9	60
Վենայի կուրսը ամէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	60
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .		
Փօթի թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու . .	7	80
» միւս տեսակը.	7	70
» չաքարաւազը .	5	50
» տրանզիտը. .	6	—
» մաքսը վճարած	11	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	7	50
Միւս տեսակը հին սերմից.	6	50
Բուրդը թուչի . . .	7	—
» թարաքամի .	4	—
Ալիւր Շորագալու . .	1	60
» Երևանի. . . .	—	—
Գարին.	1	20
Մոմը բնաճարպի (стеар.)	13	40
Մետաքս Նուխվայ. .	180	—
Կախեթունը. . . .	100	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	40	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մօկի. . . .	26	—
» լիվանի . . .	—	—
» մարթինկոյինը	18	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդականների ընդունելութիւնը ցերեկվայ և դիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 *ռուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում* 18 *ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում* 30 *ռուբլ ամսական։*

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, $9^1/_2$ *մինչև* 11 *ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։*

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 *ժամին* 21 *րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովօ (խառն գնացքը) երեկոյեան* 5 *ժամ.* 18 *րոպէ։*

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլովօ.	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւօտ.
Փօթիից . .	9. 13
Ռիօն . . .	12. 13
Միխայլովօ. .	5. 39
Գօրի. . . .	7. 5
Թիֆլիս. . .	9. 31

	1 37	
	4. 8	
	7. 56	

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 *ժ.* 31 *ր. երկրորդը՝ առաւօտեան,* 7 *ժ.* 56 *ր.*

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2, 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 *ժամից մինչև* 1 *և կէսօրից յետոյ* 3 *ժամից մինչև* 7։ *Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև* 10 *ժամ առաւօտեան և* 3—7 *երեկոյեան։*

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրօպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . .	70
Եգիպտոս . .	27

ԲԺՇԿԱՆՈՅ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 *ժամից մինչև* 1 *կէսօրից յետոյ։*

Երկուշաբթի. Վէրմիշէվ ներքին և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և ականջի հ. Սօկոլով երեխաների և ներքին հ.։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Ռէյխ աչքի հ. Ա. Բախուտով, կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան, Բակստ սիֆիլիտական և կաշու հ.

Չորեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Դուբէլիր կրծքային և երեխաների հ. Բակստ կրծքային և ջղային Սօկոլով վիրաբուժական հ.

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Կ. Բախուտով, կանանց և ջղային հ. Բակստ վեներական և կաշու հ.

Ուրբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Դուբէլիր երեխաների և կրծքային հ. Ռէյխ աչքերի հ. Բակստ կրծքային և ջղային հ. Սօկոլով վիրաբուժական հ.

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ԹԻՖԼԻՍ. Օ. Կ. Բ. Ստացանք ձեր ուղարկած լուրերը։ Շատ շնորհակալ ենք,

—ՔՈՒԹԱՅԻՍ. Մի հայ. Ձեր նամակը վերջապէս տպվել է։ Ինչ անենք որ նիւթերը քիչ ուշացնում ենք։ Չափից շատ նիւթեր ունենք։

—ԲԱԳՈՒ. Ա. Ի. Մ. Դուք հարցնում էք՝ արդեօք չարունակում են ռուսաց և եւրօպական լրագիրները գրել հայերի մասին։ Այո, այնքան են գրում, որ մենք չենք կարողանում ամեն բան արտագրել մեր լրագրի մէջ։ Ռուսաց լրագիրներից ամենից շատ հայերով զբաղված է «Голосъ» լրագիրը։ Բայց դարձեալ ցանկալի է որ հայերը ունենային ռուսաց մայրաքաղաքներից մինի մէջ իրանց սեփական օրգան ռուսաց լեզուով։ Այն ժամանակ կարելի էր միշտ թղթակցել։

Дозволено Цензурою 14 Марта 1878 г. Тифлисъ. Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ